

ՔԱՆԱԳԱՆԱՅԻՆ ԶԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Եւ եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա:
Այլ դուք մարմին Քրիստոսի եք եւ անդամք յանդամոց Նորա...»:
(Ա Կորնթ. ԺԲ 26-27)

Ամեն անգամ, երբ ինքնընծայման ուխտով եկեղեցու բնմին են կանգնում երբևէ աշխարհին պարկանող, բայց այսուհետև իրենց կյանքը Քրիստոսի Եկեղեցուն նվիրող, Քրիստոսին զինվորագրվող նվիրյալները, ցնծում, բերկրում է Սուրբ Եկեղեցին՝ լի նոր հույսերով ու սպասումներով:

Սույն թվականի նոյեմբերի 5-ին Միաձնաէջ Սուրբ Տաճարում ընծայում էր «ի պաշտօն քահանայութեան»: Հընթացս Սուրբ Պապարագի, ձեռամբ Գերաշնորհ Ս. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի և խարտավիչակությամբ Ս. Բագրատ արքեպիսկոպոսի, քահանայական ձեռնադրություն և օծում սրբացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ հինգ սարկավազներ՝ Նրայր սրկ. Խաչատրյանը, Մկրտիչ սրկ. Այվազյանը, Վիգեն սրկ. Ղազարյանը, Մանվել սրկ. Շաքարյանը և Արթուր սրկ. Թումանյանը:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ

Նախընթաց օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, «Նայեա եւ լուր» շարակալի երգեցողության ներքո, սարկավազները, ի նշան խոնարհության, մոտենում և ծնկի են իջնում ձեռնադրող Սրբազան Հոր շուրջը: Միաբանների և ժողովրդի ներկայությամբ կատարվում է հավաքի քննություն. խոստովանահայրը ներկայացնում է ընծայյալներին՝ պատասխանելով ձեռնադրող եպիսկոպոսի հարցերին: Ապա սարկավազները հանձն են առնում հետևել Առաքելական Սուրբ Եկեղեցու ուղղափառ դավանությանը և հայրերի ուսմունքին՝ ի լուր ամենքի ընթերցելով Ս. Գրիգոր Տաթևացու «Հաւարդոյ խոստովանութիւն»-ը:

ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ

Հաջորդ առավոտյան Մայր Տաճարում մատուցվում է Սուրբ Պապարագ: Պապարագում է Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Զի ողորմած եւ մարդասեր ես Աստուած» մաղթանքից հետո հնչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականը, և նորընծաները, խարավափյալ Տ. Բագրատ արեղա Գալստյանի առաջնորդությամբ, աջակողմյան աստիճաններով բարձրանում են Ավագ խորան, ապա, դառնալով արևմուտք՝ դեպի ժողովուրդը, վեր են բարձրացնում իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքի: Տաճարի կամարների ներքո հնչում է «Աստուածային եւ երկնատու շնորհ» շարականը:

Ընծայյալները դառնում են դեպի Ավագ խորան, և ձեռնադրող եպիսկոպոսը, ձեռքերը խաչաձև դնելով նորընծաներից յուրաքանչյուրի գլխին, ասում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարեք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարար պահել սեղանոյ Տառն Աստուծոյ»:

Սարկավագական ուրարը, որը կրում են ձախ ուսին, ի նշան Քրիստոսի Եկեղեցու սպասավորի լծի ծանրությունը մասնակիորեն կրելու, վերածվում է փորձարարի և զգվում ընծայյալի պարանոցին՝ խորհրդանշելով այդ քաղցր լուծն ամբողջությամբ հանձն առնելուն: Ապա փրվում է քահանայական փիլոն և պարարագջի զգեստներ:

Մոտենում է հոգևոր վերացման, երկնայինին հաղորդ դառնալու գերագույն պահը, երբ ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծաների ճակատն ու ձեռքերն օծում է Սրբալույս Մյուռնով և նրանց փալիս նոր՝ հոգևոր անուններ. Հրայր սարկավագն այսուհետ դառնում է Տ. Գրիգոր, Մկրտիչ սարկավագը՝ Տ. Արիստակես, Վիգեն սարկավագը՝ Տ. Խաղ, Մանվել սարկավագը՝ Տ. Սահակ, իսկ Արարակ սարկավագը՝ Տ. Դանիել:

Նրանք արդեն քահանաներ են և, որպես Տիրոջ փրկագործական խորհուրդը մատուցող պաշտոնյաներ, Սրբազան Հորից ընդունում են սկիհը և իրենց անդրանիկ օրհնությունը փալիս ժողովրդին:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամերգությունից առաջ, կատարվում է «Օրհնության վեղարի» կարգը, որով խորհրդանշվում է ընծայյալի կուսակրոնության ուխտը: Վեղարի օրհնություն են սպանում չորս քահանաներ՝ Ս. Գրիգոր արք. Խաչապրյանը, Ս. Արիստակես արք. Այվազյանը, Ս. Սահակ արք. Շաքարյանը և Ս. Դանիել արք. Թումանյանը, իսկ Ս. Խաղը դառնում է ամուսնացյալ քահանա՝ սպասավորության կոչվելով «ի մեջ ժողովրդեան»:

Հանդիսավոր արարողությունից հետո նորընծաներն ուղղվում են Վեհարան՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն սրանալու: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և ողջ ժողովուրդն ակնկալում է Կեսենել իր ժամանակի հոգևոր հովվին և մաղթում է. «Տիրոջ աջը ձեզ գորավիզ»:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Գևորգյան Հոգևոր Ընմարանի
Զ լսարանի սան**